Ակադեմիաներ, պարգևներ և համալրում

Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի և Բնության ու հասարակության մասին միջազգային ակադեմիայի հայաստանյան մասնաճյուղերի նախագահությունների՝ ՀՀ ԳԱԱ կլոր դահլիճում 2005-ի դեկտեմբերի 29-ին տեղի ունեցած համատեղ նիստը յուրահատուկ էր այն իմաստով, որ մասնաճյուղերի մի շարք ակադեմիկոսներ արժանացան միջազգային պարգևների, իսկ գիտության ու գրականության մի քանի ներկայացուցիչներ լրացրին նրանց շարքերը:

Ասպետների միջազգային միության «Պետրոս Մեծ» շքանշանով արժևորվեց Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ՌԲԳԱ պատվավոր նախագահ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻ ծավալած բեղմնավոր գործունեությունը:

ՌԲԳԱ զինվորական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, գեներալ-լեյտենանտ ՍՏԵՓԱՆ ՄԻՐԶՈՅԱՆԸ ստացավ ասպետական թիկնոց, ասպետական նշաններ և Ասպետների միջազգային միության Ասպետի շքանշան:

ԲՀԳԱ ակադեմիկոս ԼԱՎՐԵՆՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԸ և ՌԲԳԱ ակադեմիկոս ՄԱՐԻՆԵ ՍԱՖԱՐՅԱՆՆ արժանացան «Եկատերինա Մեծ» շքանշանի:

Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ՌԱՖԱՅԵԼ ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆԸ հայ-ռուսական բարեկամության ամրապնդման գործում անուրանալի ծառայություններ է մատուցել, որի համար զույգ մասնաճյուղերի նախագահ ակադեմիկոսն արժանացել է «Ռուսաստանի վերածննդի համար» մեդալի: Այն դափնեկրին հանձնեց Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանության խորհրդական Վլադիմիր Գրիբանովը:

Գեներալ-լեյտենանտ Ստեփան Միրզոյանը պատիվ ունեցավ Հերոսների Ռուսաստանյան միության նախագահ, բանակի գեներալ Վալենտին Վարենիկովի անունից «Հաղթանակի 60-ամյակի» հոբելյանական մեդալ հանձնել Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, գեներալ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ԲՀԳԱ ակադեմիկոս, կոմպոզիտոր ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ և ՌԲԳԱ ակադեմիկոս, գեներալ ՀՈՒՍԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ:

Բնական գիտությունների միջազգային ակադեմիայի Ա. Շվեյցերի անվան մեդալ ստացավ ԲՀԳԱ Հայաստանի մասնաճյուղի ակադեմիկոս ՍՏԵՓԱՆ ՌՈՍՏՈՄՅԱՆԸ:

Նորընտիր ակադեմիկոսներին դիպլոմներ հանձնեց Ռաֆայել Մելիք-Օհանջանյանը: ՌԲԳԱ կազմում ակադեմիկոսների վկայագրեր ստացան արդարադատության գեներալ-մայոր, Հայաստանի գլխավոր դատախազության պարտության պետ ՎԱՂԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ և գեներալ-մայոր ՄՈՒՐԱՉ ՍԱՐԳՍՅԱՆԸ, ԲՀԳԱ կազմում՝ պատմական գիտությունների դոկտոր ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻՆ, Հայաստանի գրողների միության անդամներ, մի շարք մրցանակների դափնեկիրներ, «Հայաստան» թերթի գլխավոր խմբագիր, արձակագիր ՏԻԳՐԱՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ և գրող-հրապարակախոս ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿՅԱՆԸ: Պատվավոր դոկտորի դիպլոմներ տրվեցին ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ, ԲԱԲԿԵՆ ԲԱՅԱԹՅԱՆԻՆ, ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ԱՆԱՀԻՏ ՌՈՒԽԻԿՅԱՆԻՆ և ԱՆԴՐԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ:

Պարգևատրվածներին ջերմորեն ողջունեցին ՌԲԳԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր Հայկ Ղազարյանը, Եղեռնի թանգարանի տնօրեն Լավրենտի Բարսեղյանը, գեներալ-լեյտենանտ Ստեփան Միրզոյանը, փորձարարական կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Կոնստանդին Ղարագյոզյանը, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը, Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան խորհրդական Վլադիմիր Գրիբանովը, կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանը և ուրիշներ:

Նիստի աշխատանքը ամփոփեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ՌԲԳԱ պատվավոր նախագահ Ֆադեյ Սարգսյանը: Նա բարձր գնահատեց պարգևատրված գիտնականների արժանի ներդրումը Հայաստանի գիտության զարգացման գործում և առանձնահատուկ կերպով նշեց, որ զույգ ակադեմիաների հայաստանյան մասնաճյուղերը, նրանց նախագահ Ռաֆայել Մելիք-Օհանջանյանի հմուտ ղեկավարությամբ, բազմակողմանի, ակտիվ աշխատանք են կատարել գիտական ներուժը պատշաճորեն աճեցնելու, միջազգային գիտական հաստատությունների հետ համագործակցելու ասպարեզում, և որ մասնաճյուղերն իրենց բեղմնավոր գործունեությամբ էապես առանձնանում և մեծ հեղինակություն են վայելում գիտական հանրության շրջանում:

Արտավազդ ՍԱՔԱՆՅԱՆ
ԲՀԳԱ Հայաստանի մասնաճյուղի հումանիտար բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար